ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարսել, **14/06/2015**
համար Ն**0207620150614**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան Հայսատանի Ներքին գործերի նախարարությունը ձեզ տեղեկացնում է, որ «ԱՀ Մայցի վտարանդի կառավարություն» կոչվող Ա. Մկրտչյանի խումբը ոչ մի լիազորություններ չունի հանդես գալու Արևմտյան Հայաստանի հայերի և Կառավարության անունից և իրենց կազմակերպած «Արևմտյան Հայաստանի պատգամավորների ընտրություններն» անօրինական են: Հիշեցնում ենք, որ դեռևս 2013 թվականի դեկտեմբեր ամսին տեղի են ունեցել Արևմտյան Հայաստանի խորհրդարանի պատգամավորների ընտրություններ և այս կառույցը, իր օրենսդիր գործունեությամբ, Արևմտյան Հայստանի հայերի իրավունքների ճանաչման առաքելությունն է իրականքցնում:

Վերոհիշյալ սադրիչ գործողությունների կազմակերպիչներն ուղղակի վնաս են հացնում Արևմտյան Հայաստանի հայերի իրավունքների վերականգնման գործընթացներին՝ ապատեղեկացնելով հանրությանը և խոչընդոտելով 2011 թվականից գործող Արևմտյան Հայաստանի իրական կառավարության գործունեության լուսաբանությունը:

Այս ապակառուցողական աշխատանոների կազմակերպիչներն Արևմտյան Հայստանի օրենքների ամբողջ խստությամբ իրենց պատասխանատվության են կանչվելու, իսկ այս գործընթացին չկանխամտածված և միամտորեն մասնակցած անձանց հորդորում ենք կեսեցնել իրենց հարաբերությունները «ԱՀ Մայցի վտարանդի կառավարություն» կոչվող Ա. Մկրտչյանի խումբի հետ և իսկույնևեթ կապվել մեր ներկացացուցիչների հետ հետևյալ էլ,փոստով՝ mi.gov.wa@gmail.com.

ԱՀ ՆԳՆ Մ. ՇԱՀԲԱԶՅԱՆ